МИНИСТЕРСТВО ЭНЕРГЕТИКИ И ПРИРОДНЫХ РЕСУРСОВ РА
ЗАО
"ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"

MINISTRY OF ENERGY AND NATURAL RESOURCES OF THE RoA
CJSC
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS"

0084, Армения, Ереван, ул.Зор. Андраника 1
Тел: 72 00 10 Факс: 72 01 21

Zor. Andranikst. 1, Yerevan, Armenia, 0084
Tel: 72 00 10. Fax: 72 0121
E-mail: hvenbec@gmail.com

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ»ՓԲԸ
0084 Հայաստան,Երևան,Զոր. Անդրանիկի 1,
Հեռ. 72 00 10,Ֆաքս. 72 01 21

N 13-01/1078

"03" 09 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-503» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-503» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Բարձրավոլտ էլեկտրացացներ» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերումը:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում **«ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/44»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Զ Անդրանիկի 1 հասցեով մինչև 2014թ. սեպտեմբերի 16-ը, ժամը 12:00-ին: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ռոմեն Ալբերտյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի Զ. Անդրանիկի 1 հասցեում, 2014 թ. սեպտեմբերի 16-ին, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումների ձեռքբերումը:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի մատակարարման (որը

կազմված է 15 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1.1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (հավելված N5.1), (ներկայացվում են ձեռք բերվող ապրանքի ընդհանուր գնով՝ ըստ չափաբաժինների): Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8-503» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hven.gnumner@gmail.com:

**Գլխավոր տնօրեն** **Ա. ԱՆԱՆՅԱՆ**

Կատարող՝ Ռ. Ալբերտյան
Հեռ. 72-03-80